ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մելիքյան,

ի պատասխան Ձեր 12.08.2025թ. հ. 190-2025թ. գրության՝ տեղեկացվում է.

«Երևանի հ.140 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ մանկապարտեզ) գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել է՝ համաձայն Երևանի քաղաքապետի 07.06.2023թ. հ.1456-Ա որոշման: Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողները նախապես ծանուցվել են հաստատության գործունեության դադարեցման մասին, այդուհետ մանկապարտեզի սաները, ըստ առաջնահերթությունների, հնարավորինս տեղափոխվել են Շենգավիթ վարչական շրջանում գործող այլ մանկապարտեզներ:

Ինչ վերաբերում է մանկապարտեզի աշխատակիցներին, վերջիններս պահպանում են իրենց աշխատատեղը և վարձատրվում ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ պարապուրդի սկզբունքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ